2849

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԼՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ

ԸՆԿԵՐՏՆԵՐԻՆ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ
Եկեղեցական տպարան Մայր Աթոռ

1916

14409

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց

2849

14409

Ի վերայ իսկականին՝
Հաստատելով զհրամանագս, տամք
ի գործադրութիւն:
5 Սեպտեմբերի 1946 թ.

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ.

1. Ճեմարանի աշակերտների ներքին կեանքի անմիջական վերահսկիչներն են Տեսուչը, Տեսչի օգնականը, դասախարակները և վերակացուները, որոնց իրաւասութիւնները պարտադիր են աշակերտների համար։

2. Աշակերտները որ և է խնդրով դիմում են հերթապահ վերակացուին կամ դասախարակին, իսկ կարևոր դէպքերում Տեսչի օգնականին։

Ծանօթ. Տեսուչն ունի ընդունելութեան որոշ ժամեր։

3. Աշակերտները պարտաւոր են վարք ու բարքով, խօսքով, գրութեան մէջ լինել պարկեշտ ու վայելուչ։

4. Աշակերտները պարտաւոր են վայելուչ կերպով ողջունել ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, Մայր Աթոռի միաբաններին եւ Ճեմարանի ուսուցիչներին ու պաշտօնեաներին։

5. Աշակերտներից պահանջւում է մաքրութիւն և մաքրասիրութիւն։

6. Աշակերտները պահպանում են պատշաճաւոր լռութիւն բոլոր համախմբումների ժամանակ՝ եկեղեցի գնալիս, եկեղեցում, աղօթքի սրահում, դասարանում, սեղանատանը, ննջարանում և այլն։

7. Բոլոր աշակերտները յաճախում են եկեղեցի նախատօնակ և շաբաթ երեկոներին, այլ և կիրակի և տօն օրերի ս. պատարագին։

Ծանօթ. 1. Երգեցիկ խումբը եւ եկեղեցում հերթով ծպատաւորողները յաճախում են եկեղեցի սահմանուած կարգով ու թուով։

2. Երգեցիկ խումբն եկեղեցում եւս ենթարկւում է երգեցողութեան ուսուցչի կամ նորա օգնականի հրահանգներին։

8. Աշակերտները խոստովանում ու հաղորդւում են տարեկան մի անգամ։

9. Աշակերտներն իրենց ստացած հաբկաւոր հագուստեղէնը, ուսումնական ու դասական պիտոյքները, դասագրքերն ու ընթերցանութեան գրքերը պարտաւոր են պահել մաքուր ու խնամքով։

10. Աշակերտները պէտք է հոգատար լինին Ճեմարանի գոյքին։

11. Աշակերտը հատուցանում է ամէն մի կորցրած կամ փչացրած իրի արժէքը։

12. Առաւօտը որոշեալ ժամին հերթապահ վերակացուի ազդարարութեամբ աշակերտները պարտաւոր են անյապաղ վեր կենալ, հագնուել, անկողինը յարդարել ու ելնել ննջարանից։

13. Առաւօտեան ու երեկոյեան զանգը հնչելուն պէս աշակերտները հաւաքւում են Ճեմարանի ներքին սրահում և կարգով բարձրանում վերին սրահն աղօթելու։

Առաւօտեան աղօթքից յետոյ նոյն կարգով իջնում են ցած և ապա գնում սեղանատուն թէյի։ Երեկոյեան աղօթքից յետոյ

Ա. Բ. Գ. դասարանի աշակերտները կարգով գնում են ննջարան, իսկ Դ. Ե. Զ. դասարանցիներից ցանկացողները իրենց դասարանները՝ շարունակելու զբաղմունքը առաւաւելն մինչև ժամը 11-ը։

14. Աշակերտները սեղանատուն են գնում և եկնում այնտեղից կարգով ու միասին։

15. Սեղանատանն աշակերտները պարտաւոր են պահպանել լռութիւն և հարկաւոր դէպքում դիմել միայն վերակացուին։

—:::—

16. Դասի զանգը հնչելուն պէս աշակերտները պարտաւոր են առանց աղմուկի շտապել դասարան, հանգիստ նստել իրենց տեղերը և լուռ սպասել ուսուցչին։

17. Պաշտօնական և ազատ ժամերին, ինչպէս և սերտարանում աշակերտները ճեմարանի Տեսչին, ուսուցիչներին և միւս պաշտօնեաներին, նաև հիւրերին, ողջունում են ոտքի կանգնելով։

18. Դասը չիմացող աշակերտը դասի սկզբին յայտնում է ուսուցչին այդ մասին։

Զսովորած դասի համար աշակերտը հաշիւ է տալիս ուսուցչին։

19. Հիւանդութեան և այլ պատճառով բացակայող աշակերտները պարտաւոր են բաց թողած դասերը հասցնել։

20. Դասի ժամանակ պարտաւոր են լինել հանգիստ, ուշադիր, չխանգարել ընկերներին և չյուշել։

21. Դասը վերջանալուն պէս աշակերտները պարտաւոր են դուրս գալ դասարանից։

22. Դասարանի բոլոր աշակերտները պարտաւոր են դասատիարակի նշանակած կարգով ու նրա ցուցմամբ օրապահութիւն անել։

23. Օրապահները պարտաւոր են.

ա. Հսկել դասարանի մաքրութեան և օդափոխութեան։

բ. Պատրաստ պահել դասարանում կաւիճ, սրբիչ, ուսուցչական սեղանի գրիչն ու թանաքամանը և իւրաքանչիւր դասի անհրաժեշտ պիտոյքները և գործադրութիւնից յետոյ խնամքով յետ տանել։

գ. Որ և է իրի պակասութեան դէպքում

օրապահը պէտք է դիմէ հերթապահ վերակացուին։

24. Սերտողութիւններին աշակերտները պարտաւոր են զբաղուել դասարաններում։ Արգելւում է սերտողութեան միջոցին դասարանից ելնել առանց վերակացուի թոյլտուութեան։

25. Աշակերտներին նուագել թոյլատրւում է երաժշտանոցում նշանակած ժամանակին։

—⁂—

26. Հիւանդացող աշակերտը պարտաւոր է գնալ հիւանդանոց հերթապահ վերակացուի տոմսակով և առողջանալուց յետոյ դուրս գալ այնտեղից բժշկի տոմսակով։

27. Աշակերտները հիւանդներին այցելել կարող են միայն հերթապահ վերակացուի տոմսակով։

—⁂—

28. Զբօսանքի գնալ ցանկացող աշակերտները, որոշեալ ժամերին, զբօսանքի են գնում և վերադառնում հերթապահ վերակացուների հետ։

29. Վարչութեան թոյլտուութեամբ աշակերտները այցելութեամբ և կարևոր գործով կարող են բացակայել ճեմարանից կիրակի առօն օրերը և նրանց նախընթաց երեկոները։

—⁂—

30 Ճեմարանում, սեղանատանը և ընդՀարանում արգելւում է կրել գլխարկ և հագնել վերարկու ու կրկնակօշիկ։

31. Աշակերտներին արգելւում է կրել մատանի կամ որ և է ուրիշ զարդ, /նչպէս և ձեռնափայտ։

32. Աշակերտները դրամ չեն պահում իրենց մօտ, այլ յանձնում են Վարչութեան նշանակած անձին, որից և առնում են մաս-մաս որոշեալ ժամերին։

33. Աշակերտներին չի թոյլատրւում առանց հերթապահ վերակացուի թոյլտուութեան յանձնարարութիւններ անել ծառաներին։

34 Աշակերտներին արգելւում է առ ու ծախով զբաղուել միմեանց հետ։

35. Աշակերտներին արգելւում է ծխել։

36. Ազատ ժամերին աշակերտական զրոյցներ ու խորհրդակցութիւններ թոյ-

լատրելի են միայն Վարչութեան գիտութեամբ և դաստիարակի ղեկավարութեամբ։

37. Աշակերտներին արգելւում է յաճախել ակումբներ, Վաղարշապատի թէյատները, կաթնատները և ճաշարանները։

38. Աշակերտները կարող են պարբերական հրատարակութիւններ ստանալ վարչութեան թոյլտուութեամբ։

—⁂—

39. Ճեմարանն ունի ընթերցարան, որտեղ աշակերտները որոշեալ ժամերին կարող են կարդալ ստացուած պարբերականները։

40. Աշակերտները Ճեմարանի մատենադարանից օգտւում են յատուկ մշակուած հրահանգներով։

41. Վերոյիշեալ հրահանգները պարտադիր են բոլոր աշակերտների համար։ Իւրաքանչիւր զանցառու կկրի համապատասխան պատիժ։

42. Սոյն հրահանգներում չնախատեսած դիպուածների համար աշակերտները ցուցմունք են ստանում Վարչութիւնից։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1. Քննութիւնք ընդունելութեան աշակերտելոց լինին մի անգամ և եթ ի տարւոջ և աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարեգլխոյ։

(Յօդ. 73)։

2. Որք մի անգամ ցանկասցին մտանել յաշակերտութիւն Ճեմարանի, մատուսցին խնդիր յանուն ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ, ոչ անագան քան զ1 Յուլիսի։

(Յօդ. 74)։

3. Ընդ խնդրագրի մատուցանին վկայագիր ուսման և բարի վարուց, եթէ հանդերձեալն ի մտանել Ճեմարան ելեալ իցէ յուսումնարանէ իմեքէ, այլ և վկայական ծննդեան և մկրտութեան, ևս և պատուաստման ծաղկի։

(Յօդ. 75)։

4. Նորեկ աշակերտք քննեսցին ի բժշկէ

ձեմարանին որ տայ Տեսչին գրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա։

(Յօդ. 76)։

5. Կարին ընկալեալ լինիլ աշակերտք յամենայն դասարանս յետ կանոնաւոր հարցաքննութեան։

(Յօդ. 78)։

6. Յառ ջին դասարան մտանին պատանիք ի 14 էն ց16 ամեայս և ըստ այսմ համեմատեալ կազմեսցի դուցակ ամաց վասն աշակերտելոց յաջորդ դասարանաց։

(Յօդ. 81)։

7. Նորեկ աշակերտք պարտին դնել ի գրաւ զգումար ինչ. այն է յայսկոյս կովկասեանց 50 ռուբլի, իսկ եկեալք յայլ վիճակաց Ռուսաստանի կամ յօտար աշխարհաց 75 ռուբլիս, որպէս զի հատուսցի այն ի ծախս ճանապարհի, եթէ հարկ լիցի արձակել զաշակերտն զայն, ևս և ի գին կորուսեալ կամ վատնեալ գրոց, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց։

(Յօդ. 84)։

8. Ի հեռանալ աշակերտելոց իսպառ ի ձեմարանէն ընկալցին զգրաւական գումարն,

յետ ի բաց հանելոյ յայնմանէ զգին կորուսեալ կամ վատնեալ իրեղինաց։

(Յօդ. 85)։

9. Մարթ է թողուլ զաշակերտս ի նոյն դասարանի զամ մի և եթ յընթացս ողջոյն դպրոցական ուսման, յորժամ պատճառ ոչ յառաջադիմելոյ նոցա ծանրակշիռ ինչ լիցէ ապա թէ ոչ ի բաց արձակին ի ձեմարանէն։,

(Յօդ. 95)։

10. Մէն մի թոշակատու աշակերտաց հատուցանէ ի տարին երկերիւր ռուբլիս վճարելով զգումարն յերկուս նուագս ի սեպտեմբեր և ի յունուար ամսեան։

(Յօդ. 105)։

11. Եթէ թոշակատու աշակերտ ոք ելանիցէ կամ արձակիցի ի ձեմարանէն մինչև լրացեալ ուսումնական կիսամեկին, դրամն հատուցեալ վասն նորա ոչ դարձուցանի յետս։

(Յօդ. 107)։

ՊԵՄ
ՄԵՐ ՄԱՍՈՒՄԸՆԹԱՑ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014895